Ն 18 542

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՍՊԴ 72 -2025
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «31» «07» 2025 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի սթրիթ վորքաութ ֆեդերացիա» մարզական հասարակական կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս նախագահ Արթուր Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 17-ի N 969-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), որոշման «1163.Մասսայական սպորտ» ծրագրի «11029. Վորքաութ մարզաձևի զարգացում և մասսայականացում» միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է միջոցառման իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված գումարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված գումարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել միջոցառումը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառման արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված միջոցառման իրականացման ժամկետը (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառման իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումը չի համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառման ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառման արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումը,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումը և հաշվետվությունները,
2.3.3. կատարել միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծախսերը և գործողությունները համապատասխանում են միջոցառմանը և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,
2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝
2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել միջոցառմամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի,
2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումը,
2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառման կատարման ընթացքի մասին,
2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,
2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,
2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան

նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից միջոցառման իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. իրականացնել ծրագրերի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառման իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, սպորտային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել ԿԳՄՄՆ մասնակցության ձևաչափը (ԿԳՄՄՆ ֆինանսավորմամբ, ԿԳՄՄՆ աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ սպորտային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով:

Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառման շրջանակում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով** սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ ծրագրում կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել **ՀՀ Աշխատանքային օրենսգրքով** սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է առավելագույնը 11834.4 հազար (տասնմեկ միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր) դրամ՝

(ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:
3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
3.3. Համաձայն «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2025 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 10-ն է :
4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումը կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:
6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ

հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառման իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառման շրջանակում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի սթրիթ վորքաութ ֆեդերացիա»
Երևան, Վ. Սարգսյան 3	մարզական հասարակական կազմակերպություն
Կառավարական տուն N 2	ք. Հրազդան 2301, Կենտրոն թ. Շ.45 բն.35
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1570080996890100
Հ/Հ՝ 900011057974,	ՀՎՀՀ 03027423
ՀՎՀՀ՝ 02698732	
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
_____ Հ. Հակոբյան	_____ Ա.Հարությունյան
(ստորագրություն)	Կ.Տ.
Կ. Տ	

Հավելված N 1
«31» «07» 2025 թ.
N ՍՊԴ 2025 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազ.դրամ)
1.	Վորքաութ մարզաձևի զարգացում և մասսայականացում	Վորքաութ մարզաձևի զարգացման և մասսայականացման ապահովում	«Հայաստանի սթրիթ վորքաութ ֆեդերացիա» մարզական ՀԿ-ի կողմից հանրության շրջանում վորքաութ մարզահրապարակների քանակի ավելացում ու վորքաութով զբաղվելու մշակույթի ինտեգրում համայնքների սոցիալական միջավայրին	**Արդյունքները** Տարբեր տարիքային խմբերի մարդկանց ներգրավածությունը մարզումներում **Գնահատման չափանիշները** Մարզահրապարակների բացում-4 հատ Նվազագույնը 2000 հանդիսատես	30.11.2025թ.	11834.4

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011057974 ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ.Հակոբյան
Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի սթրիթ վորքաութ ֆեդերացիա» մարզական հասարակական կազմակերպություն
ք. Հրազդան 2301, Կենտրոն թ. Շ.45 բն.35
Հ/Հ 1570080996890100
ՀՎՀՀ 03027423
Նախագահ՝
_____ Ա.Հարությունյան
Կ.Տ.

Հավելված N2
«31» «07» 2025թ.
N ՍՊԴ 72 -2025 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«1163.Մասսայական սպորտ» ծրագրի «11029. Վորքաութ մարզաձևի զարգացում և մասսայականացում» միջոցառման իրականացման ծախսերի

Օգոստոս – նոյեմբեր

ՀՀ	Ծախսեր	Չ/Մ	Միավորի քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդամենը (հազար դրամ)
1	**Իրազեկող տեսանյութերի նկարահանման եվ տարածման ծառայություններ, այդ թվում՝**				**2200.0**
1.1	Իրազեկող տեսանյութերի նկարահանում և մոնտաժ՝ 3 հատ x 300.0 հազ.դր.	հատ	1	900.0	900.0
1.2	Բլոգերների ծրագրի գովազդում՝ 8 հատ x 100.0 հազ.դր.	հատ	1	800.0	800.0
1.3	Առողջ ապրելակերպը և սպորտը քարոզող իլուստրացիաների պատրաստում՝ 10 հատ x 20.0 հազ.դր.	հատ	1	200.0	200.0
1.4	Սոցցանցերում ծրագրի մասին նյութերի վճարովի գովազդի տեղադրում՝ 15 հատ x 20.0 հազ.դր.	հատ	1	300.0	300.0
2	**Մարզահրապարակների բացման միջոցառում ք. Ջերմուկ, այդ թվում՝**				**625.0**
2.1	Միջոցառման ֆոտո և վիդեո նկարահանման ծառայություն	հատ	1	180.0	180.0
2.2	Տրանսպորտային ծառայություն՝ 15 տեղանոց Երևան-Համայնք-Երևան	հատ	1	160.0	160.0
2.3	Մասնակիցների սննդի օրական վճար ՝ծառայություն 15 անձ/օր x 3.0 հազ.դր.	հատ	1	45.0	45.0
2.4	DJ-ի ծառայություն	հատ	1	50.0	50.0
2.5	Երաժշտական տեխնիկայի վարձակալության ծառայություն	հատ	1	100.0	100.0
2.6	Փոքրիկ ՀՀ դրոշներ երեխաների համար	հատ	100	0.4	40.0
2.7	Միջոցառման հաղորդավարի վարձատրություն (ներառյալ հարկերը)*	անձ	1	50.0	50.0
3	**Մարզահրապարակների բացման միջոցառում ք. Ճամբարակ, այդ թվում՝**				**625.0**
3.1	Միջոցառման ֆոտո և վիդեո նկարահանման ծառայություն	հատ	1	180.0	180.0
3.2	Տրանսպորտային ծառայություն՝ 15 տեղանոց Երևան-Համայնք-Երևան	հատ	1	160.0	160.0
3.3	Մասնակիցների սննդի օրական վճար ՝ծառայություն 15 անձ/օր x 3.0 հազ.դր.	հատ	1	45.0	45.0
3.4	DJ-ի ծառայություն	հատ	1	50.0	50.0
3.5	Երաժշտական տեխնիկայի վարձակալության ծառայություն	հատ	1	100.0	100.0
3.6	Փոքրիկ ՀՀ դրոշներ երեխաների համար	հատ	100	0.4	40.0
3.7	Միջոցառման հաղորդավարի վարձատրություն (ներառյալ հարկերը)*	անձ	1	50.0	50.0
4	**Մարզահրապարակների բացման միջոցառում ք. Կապան, այդ թվում՝**				**807.0**
4.1	Միջոցառման ֆոտո և վիդեո նկարահանման ծառայություն	հատ	1	180.0	180.0
4.2	Տրանսպորտային ծառայություն՝ 15 տեղանոց Երևան-Համայնք-Երևան	հատ	1	240.0	240.0
4.3	Հյուրանոցային /երկտեղանոց/ ծառայություն մարզիկների համար՝ 10 անձ/օր x 13.6 հազ.դր.	հատ	1	68.0	68.0
4.4	Հյուրանոցային /մեկտեղանոց/ ծառայություն մարզիկների համար՝ 5 անձ/օր x 6.8 հազ.դր.	հատ	1	34.0	34.0
4.5	Մասնակիցների սննդի օրական վճար ՝ծառայություն 15 անձ/օր x 3.0 հազ.դր.	հատ	1	45.0	45.0
4.6	DJ-ի ծառայություն	հատ	1	50.0	50.0
4.7	Երաժշտական տեխնիկայի վարձակալության ծառայություն	հատ	1	100.0	100.0
			100	0.4	40.0

	Մարզահրապարակների բացման միջոցառում ք. Բերդ,				
5	այդ թվում՝				807.0
5.1	Միջոցառման ֆոտո և վիդեո նկարահանման ծառայություն	հատ	1	180.0	180.0
5.2	Տրանսպորտային ծառայություն՝ 15 տեղանոց Երևան-Համայնք-Երևան	հատ	1	240.0	240.0
5.3	Հյուրանոցային /երկտեղանոց/ ծառայություն մարզիկների համար՝ 10 անձ/օր x 13.6 հազ.դր.	հատ	1	68.0	68.0
5.4	Հյուրանոցային /մեկտեղանոց/ ծառայություն մարզիկների համար՝ 5 անձ/օր x 6.8 հազ.դր.	հատ	1	34.0	34.0
5.5	Մասնակիցների սննդի օրական վճար՝ ծառայություն 15 անձ/օր x 3.0 հազ.դր.	հատ	1	45.0	45.0
5.6	DJ-ի ծառայություն	հատ	1	50.0	50.0
5.7	Երաժշտական տեխնիկայի վարձակալության ծառայություն	հատ	1	100.0	100.0
5.8	Փոքրիկ ՀՀ դրոշներ երեխաների համար	հատ	100	0.4	40.0
5.9	Միջոցառման հաղորդավարի վարձատրություն (ներառյալ հարկերը)*	անձ	1	50.0	50.0
6	Կրթական ծրագրի ծառայություններ համայնքների մարզիչների համար, այդ թվում՝				2290.0
6.1	Օնլայն մարզչական դասընթաց միջազգային ֆեդերացիայի Workout Academy ծրագրով 8 ուսանողի համար՝ 8 անձ x 260.0 հազ.դր.	հատ	1	2,080.0	2080.0
6.2	Դասընթացի և ուսանողների ֆոտո և վիդեո նկարահանում, ռեպորտաժի պատրաստում	հատ	1	210.0	210.0
7	Ուսուցողական տեսանյութեր, այդ թվում՝				850.0
7.1	Տեսանյութերի նկարահանման և մոնտաժման՝ ծառայություն , 5 տեսանյութ x 120.0 հազ.դր.	հատ	1	600.0	600.0
7.2	Նկարահանման մասնակցող 2 մարզիչների վարձատրություն (ներառյալ հարկերը)*	անձ	2	100.0	200.0
7.3	Սպորտային համազգեստի ձեռքբերում տեսանյութի մասնակից մարզիչների համար	հատ	2	25.0	50.0
8	Այլ ծախսեր, այդ թվում՝				1658.0
8.1	Գնումները համակարգողի ծառայություն	հատ	1	250.0	250.0
8.2	Ծրագրի կարգախոսով և լոգոներով դրոշների տպագրում	հատ	8	20.0	160.0
8.3	Ռեզինե թևնոցներ մարզիկների և երեխաների համար (նվեր)	հատ	300	0.6	180.0
8.4	Փոքր դինամիկներ (Bluetooth) համայնքների մարզիչների համար	հատ	4	20.0	80.0
8.5	Շապիկներ մրցումների մասակիցների համար	հատ	100	6.0	600.0
8.6	Շապիկներ մարզիչ լիդերների համար	հատ	16	8.0	128.0
8.7	Շապիկներ շտաբի համար, Polo տեսակի	հատ	20	10.0	200.0
8.8	QR կոդերով ցուցանակների տպագրություն	հատ	30	2.0	60.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				9862.0
	ԱԱՀ**				1972.4
	ԸՆԴԱՄԵՆԸ				11834.4
	* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով				
	**ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011057974,
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի սթրիթ վորքաութ ֆեդերացիա»
մարզական հասարակական կազմակերպություն
ք. Հրազդան 2301, Կենտրոն թ. Շ.45 բն.35
Հ/Հ 1570080996890100
ՀՎՀՀ 03027423
Նախագահ՝
Ա.Հարությունյան
Կ.Տ.

Հավելված N 3
« » « » 2025 թ.
N ՍՊԴ- - 2025 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2025 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
« » « » 2025թ.
N ՍՊԴ- -2025 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2025 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2025 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2025 թ.-ի թիվ ե - ՍՊԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝
_____

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝
_____